ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 հունվարի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

6
(2672)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 7

ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը հաճախ է աչքի ընկնում մանիպուլատիվ հայտարարություններով: 2021 թվականի հունիսին Արսեն Թորոսյանն անդրադարձել էր պատերազմական օրերին Ստեփանակերտի ջրամատակարարման հետ կապված ԱԱԾ պահեստազորի սպաների միության նախագահ Միքայել Համբարձումյանի բարձրացրած խնդրին ու հայտարարել, թե այդ ամենը սուտ է: «Նա անձամբ այդ հարցով ինձ հետ խոսել է, նա խեղաթյուրում է իրականությունը, եթե կուզեք՝ ասեմ՝ ստում է, որովհետեւ այդ հարցին եղել է պատասխան, որ մենք պատրաստ ենք ջրի նմուշները վերցնել, ընդունել Երեւանում եւ դա հետազոտել: Դա արվել է, պարզապես այդ նմուշը սովորական նմուշների համար նախատեսված անոթներով պետք է տեղափոխվեր Երեւան, այսինքն՝ այդ առումով Միքայել Համբարձումյանը ստում է»,- նշել էր Արսեն Թորոսյանը: Ի պատասխան՝ Միքայել Համբարձումյանը նշել է. «Այս պաշտոնյան մտածում է, որ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները պետք է պատերազմական թեժ իրողությունների պայմաններում, իրենց օպերատիվ սպասարկման ուղղությունները թողած, ամեն օր Ստեփանակերտից Երեւան ջուր կրեին իրենց համար, որ իրենք էլ, Երեւանում նստած, հետազոտություն անցկացնեին: Նրա պատկերացմամբ, փաստորեն, ԱԱԾ աշխատակիցները, մասնագետներ չլինելով, պիտի որոշեին, թե որտեղից, ինչ եղանակով, պարբերականությամբ ու տարաներով ջրի նմուշառում անեին»,- նշել էր նա: Կարճ ասած, Արսեն Թորոսյանն է ստել:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը, որը նաեւ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովն է ղեկավարում, առաջիկայում լքելու է այդ պաշտոնը: Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ Էդուարդ Աղաջանյանի՝ դեսպան նշանակվելու ցանկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինս շատ հիասթափված է իր քաղաքական ուժից, ավելին՝ վերջին շրջանում շփում չի ունեցել անգամ Նիկոլ Փաշինյանի հետ: Կուսակիցների հետ քննարկումների ժամանակ պատգամավորը հայտարարել է, որ նպատակ ունի երկրից հեռանալու, սակայն կոնկրետ երկիր չի նշել: Աղաջանյանը նաեւ հայտարարել է, որ այլեւս ցանկություն չունի այստեղ ապրելու եւ աշխատելու: Տեղեկությունը ճշտելու համար «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Էդուարդ Աղաջանյանի հետ, սակայն մեր բազմաթիվ զանգերն այդպես էլ անպատասխան մնացին: Երեկ հայտնի դարձավ նաեւ, որ պատգամավորը հրաժարվել է ԵԱՀԿ ԽՎ Ազգային ժողովի պատվիրակության ղեկավարի իր պաշտոնից: ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովը կղեկավարի Սարգիս Խանդանյանը: Վերջինիս թեկնածությանը խմբակցությունում ոչ բոլորն են կողմ, սակայն կան պատգամավորներ, այդ թվում՝ Մարիա Կարապետյանը, որ ակտիվ գովազդում է նրան եւ հենց պայքարել է Խանդանյանի՝ հանձնաժողովի նախագահ դառնալու համար:

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ է հայտնվել Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գագիկ Պողոսյանի ցուցմունքը՝ դատավոր Արուսյակ Ալեքսանյանի քրեական վարույթով: Ինչպես հայտնի է, դատավոր Արուսյակ Ալեքսանյանն արդեն երեք ամիս է՝ կալանքի տակ է, իսկ Գագիկ Պողոսյանն էլ հարցաքննվել է ԱԱԾ-ում: Հենց առաջին հարցով քննիչը հետաքրքրվել է, թե երբվանից է Պողոսյանն աշխատում այդ պաշտոնում եւ Արուսյակ Ալեքսանյանի հետ ինչ փոխհարաբերությունների մեջ է գտնվում: Ի պատասխան՝ դատավորը նշել է. «1996թ.-ից աշխատում եմ դատավորի պաշտոնում, իսկ 2022թ.-ի օգոստոսի 10-ից աշխատում եմ որպես Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդանուր իրավասության դատարանի նախագահի պաշտոնակատար: Արուսյակ Ալեքսանյանին անձնապես չեմ ճանաչում, միայն գիտեմ, որ դատավոր է»: Ապա քննիչը հետաքրքրվել է, թե միջնորդությունները դատարան ինչ կարգով են մակագրվում: «Աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից մինչեւ ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում, դատարան ներկայացված միջնորդությունները մակագրում եմ անձամբ՝ մակագրման թերթիկի վրա նշում կատարելով համապատասխան դատավորի անվան դիմաց, իսկ ժամը 18:00-ից հետո եւ ոչ աշխատանքային օրերին դատարան ներկայացված միջնորդությունները մակագրում եմ էլեկտրոնային եղանակով»:

⇨ էջ 4

2022 թվականի դեկտեմբերի 12-ից Արցախը շրջափակման մեջ է, կտրված է կապը Արցախի եւ արտաքին աշխարհի հետ: Այս օրերին հնչել են տարբեր հայտարարություններ եւ կոչեր՝ ճանապարհը բացելու շուրջ: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց հասկանալ, թե այս օրերին ինչով է զբաղված եղել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն: Մայր աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Եսայի քահանա Արթենյանը նշել է, թե Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամի եւ Լաչինի միջանցքի ապաշրջափակման համար զանազան քայլեր են իրականացվում Մայր Աթոռի եւ Վեհափառ Հայրապետի կողմից: «Ադրբեջանական ագրեսիայի եւ սադրանքի ապօրինի գործողությունների հակազդման համար Մայր Աթոռի կողմից դիմումներ են հղվել Քույր Եկեղեցիների պետերին, միջազգային ու միջեկեղեցական կազմակերպություններին: Վեհափառ Հայրապետի կողմից համապատասխան հրահանգներ են եղել աշխարհասփյուռ թեմերին, թեմական առաջնորդներին տեղերում պետական, դիվանագիտական, քաղաքական, հասարակական շրջանակներում իրականացնել իրազեկման ակցիաներ՝ բարձրաձայնելով Արցախում ստեղծված հումանիտար աղետի մասին եւ, ըստ ամենայնի, աջակցելու Արցախին»,- նշել է նա: Տ. Եսայի քահանա Արթենյանի փոխանցմամբ՝ ընթացքի մեջ են նոր նախաձեռնություններ:

ՄԱՀԱԿ ՉԷ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գեւորգ Պաղոյանը վստահեցնում է՝ ընդդիմադիր պատգամավորներին մանդատից զրկելու հարցը Սահմանադրական դատարան տեղափոխելու գործընթացի հանգուցալուծումը կախված է այն հանգամանքից, թե ինչ վարք ու գործունեություն կդրսեւորեն ընդդիմադիր պատգամավորները:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նա նշեց՝ գործընթացը ոչ թե մահակ է, այլ այն բանի վկայումը, որ իրենք ընտրողների առջեւ հաշվետու են:

-Պարոն Պապոյան, Արցախն արդեն 38 օր է՝ շրջափակման մեջ է, տարբեր գնահատականներ եղել են, կառույցներ արձագանքել են, բայց Լաչինի ճանապարհը շարունակում է փակ մնալ: Ի՞նչ գնահատական կարող եք տալ այս ամենին:

-Գիտեք, նոր գնահատականներ չկան, ամեն ինչ նշվել է, եւ կա երկու կողմ, որոնք անելիքներ ունեն: Առաջինը ադրբեջանական կողմն է ու մեղավորը, որը միտումնավոր ու պետական մակարդակով է փակել ճանապարհը: Դրա նպատակն այնտեղ մարդկանց կամ սովամահ անելն է, կամ այն, որ մարդիկ այնտեղից գաղթեն: Իրենց համար դա փորձված բան է եւ հայ ժողովրդի ճակատագրում եղած բան: Եվ երկրորդ անելիքը ռուսական կողմն է, քանի որ եթե չնահանջեին, տեղի չէր ունենա գաղթը: Դա կյանքի ճանապարհ է: Լաչինի միջանցքը ՀՀ տարածքը չէ, ցավոք սրտի, եւ նոյեմբերի 9-ի համաձայնագրով այնտեղ անելիք ունի միայն ռուսական կողմը, եւ տարածքը գտնվում է ռուս խաղաղապահների վերահսկողության տակ: Այս կոնտեքստում նրանց պատասխանատվության տակ է այդ ճանապարհի բացելը: Եթե քարաթափում տեղի ունենար, նույն ձեւ պետք է նրանք գնային եւ ճանապարհը բացեին: Մեր խնդիրն է տալ հնարավորություն, որ ռուսական կողմն իր պարտականությունը կատարի: Եթե նրանց պետք են լրացուցիչ լիազորություններ, ապա թող այդ մասին ասեն, որպեսզի հասկանանք:

-Այսինքն՝ գնդակն իրե՞նց դաշտում է:

-Եկեք ճիշտ հասկանանք. հայկական կողմից ցանկացած գործողություն կամ խոսակցություն առիթ է Ադրբեջանին եւ Թուրքիային նոր պատերազմ սկսելու: Իսկ միգուցե նրանց ցանկությունը հենց դա՞ է, օրինակ՝ որ տաքարյունություն դրսեւորվի, մի երկու գործողություն ավել տեղի ունենա, եւ լայնածավալ պատերազմ սկսվի: Սա սադրանք է ՀՀ դեմ Արցախի ժողովորդին ճնշելու միջոցով: Միգուցե սովորական քաղաքացու համար էմոցիաները շատ են, բայց պետության պարագայում պետք է դրանք մի կողմ դնել եւ սառը դատել:

-Իշանությունն արդեն երկրորդ անգամ «Հայաստան» խմբակցության պատգամավորներին մանդատից զրկելու հարցով ՍԴ դիմելու մասին է խոսում: Ի՞նչ կլինի այս անգամ:

-Եկեք սպասենք դեպքերի զարգացմանը. դրանք հարցեր են, որոնք գտնվում են քաղաքական հարցերի տիրույթում նաեւ: Օրինակ՝ առաջին դեպքում մենք որոշեցինք հնարավորություն տալ, որ գան աշխատեն: Հիմա նրանց մոտ կիսաաշխատանքային ռեժիմ է: Նրանք գալիս, գրանցվում են առավոտյան, որ աշխատավարձ ստանան, եւ ամեն ինչ անում են, որ նրանց աշխատավարձը չպակասի: Նրանք քվեարկում են ձեռնպահ կամ դեմ՝ օրենքները չկարդալով: Եթե նրանք չքվեարկեն, կզրկվեն մանդատներից: Այս անգամ եւս քաղաքական որոշման հարց է, եւ կքննարկենք, ու Դուք կիմանաք: Մենք չենք կարող մեր ժողովրդի թիկունքում ինչ-որ բան անել: Առաջին անգամից հետո ինչ-որ պրոցես է գնում, նրանք գալիս, գրանցվում են թեկուզ աշխատավարձ ստանալու համար, եւ ես կարծում եմ՝ միգուցե պետք է քննարկել եւ կրկին հնարավորություն տալ մնալ աշխատելու:

-Ստացվում է՝ սա որպես մահա՞կ եք պահում:

-Բացարձակ: Ես նման բան չասացի, բայց եթե իրենք աշխատանքի չգային բացարձակ, մահակ լիներ-չլիներ, այդ որոշումը կկայացվեր. մենք պատասխանատվություն ունենք քաղաքացիների առջեւ: Եթե իրենք վատ են աշխատում, իրենց եւ իրենց ընտրողների հարցն է:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՀԱՆԳՈՒՅԱԼՈՒԾՈՒՄ

ԻՆՉԻ՞Ց ՍԿՍՎԵՑ ՊԱՅՔԱՐԸ

Այս օրերին բոլորը սպասում էին, թե ինչպես կհանգուցալուծվի իրավիճակն Արցախում, եւ արդյոք պետնախարար Արայիկ Հարությունյանը կազատվի պաշտոնից: Ի վերջո, որոշում կայացվեց, որ Արայիկ Հարությունյանը ո՛չ հրաժարական կտա, ո՛չ էլ Ռուբեն Վարդանյանը կազատվի պաշտոնից:

Իսկ ինչի՞ց սկսվեցին նրանց տարաձայնությունները: Բանն այն է, որ Արցախի շրջափակման պայմաններում Ռուբեն Վարդանյանն անում էր հայտարարություններ, որոնք ոչ միայն արցախցիների միջեւ էին տարաձայնություններ առաջացնում, այլ նաեւ հայաստանցիների համար էին անհասկանալի:

Նրանց հարաբերություններն ավելի սրվեցին հունվարի 8-ին՝ Ռուբեն Վարդանյանի կողմից հնչեցրած հայտարարություններից հետո, որոնք կիքսեր էին: Նախ նա հայտարարեց, թե ճանապարհը 100 տոկոս փակ չէ, ապա բացասական երանգներով ներկայացրեց արցախցիներին:

«Ունեցել ենք մի դեպք, երբ ունեւոր մի ընտանիք գնացել է հանգստանալու՝ օգտագործելով իրենց կապերը. դա շատ մեծ արձագանք է ստացել: Սա չպետք է ընդունվի որպես հաջողված մարդու օրինակ: Չեմ ընդունում այն մարդուն, որ պայմանավորվել է ռուս խաղաղապահների հետ, բերել ուտելիք ու վաճառել թանկ գնով, չեմ ընդունում: Դա ոչ մի լավ բանի չի բերի: Չեմ ընդունում այն մարդկանց, որ փորձում են փող աշխատել այս իրավիճակում»,- թվարկեց նա:

Եվ, ահա, այս եւ նմանատիպ հայտարարություններից հետո Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը զանգ է ստացել, եւ անընդունելի են համարվել Ռուբեն Վարդանյանի նմանատիպ հայտարարությունները:

Արցախում ներքաղաքական լարված իրավիճակը, կարծես թե, հանգուցալուծում ստացավ: Թե՛ նախագահ Արայիկ Հարությունյանը, թե՛ Ռուբեն Վարդանյանը որոշել են հաշտ ու համերաշխ աշխատել, եւ որեւէ պաշտոնանկություն չի լինի:

Այն, որ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի եւ պետնախարար Ռուբեն Վարդանյանի հարաբերությունները լարվել էին, ակնհայտ դարձավ տարբեր դրսեւորումներով: Նախ Ռուբեն Վարդանյանը Նիկոլ Փաշինյանի օրինակով սկսեց նախկինների դեմ ատելություն գեներացնել, սկսեց Արցախի շահի դեմ բաներ խոսել, հայտարարեց, թե Լաչինի ճանապարհը ամբողջովին փակ չէ, սնունդ հասնում է ինչ-որ ճանապարհով, հայտարարեց, թե Արցախը երբեք միասնության համար չի պայքարել, եւ այլն:

Իսկ իրականում Վարդանյանն անզոր եղավ անգամ կառավարական կաբինետ ձեւավորել, ամիսներով թափուր մնացին նախարարի պաշտոնները, ի վերջո Արայիկ Հարությունյանի հավատարիմները նշանակվեցին նախարարներ:

Այս լարված իրավիճակն Արցախում հնարավոր եղավ թուլացնել մեկ պայմանով. այսուհետ Ռուբեն Վարդանյանը քաղաքական հայտարարություններ անելուց առաջ պետք է այդ մասին ասի Արայիկ Հարությունյանին, նրա հետ հստակեցնի: Ստացվում է՝ Արցախում իշխանությունը կրկին վերադարձել է Արայիկ Հարությունյանին:

ՆԱԻՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԶՐԿԵՆ

Քաղաքական իշխանությունը մեկ տարվա ընթացքում արդեն երկրորդ անգամ ընդդիմադիր պատգամավորներին մանդատից զրկելու գործընթացի մասին է խոսում: Ինչպես նախորդ գործընթացը, որ 2022-ի հուլիսին էր սկիզբ առել, այս անգամ եւս անհասկանալի է՝ ինչ շարունակություն կունենա: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս պահի դրությամբ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշել է հարցը դուրս հանել խորհրդարանից ու այն, այնուամենայիվ, Սահմանադրական դատարան ուղարկել՝ բարձրագույն այդ ատյանին թողնելով ընդդիմադիրներին մանդատից զրկելու կամ չզրկելու հարցը: Այսինքն՝ օրենքի պահանջը կկատարեն, ԱԺ խորհրդի նիստով կորոշեն հարցը ուղարկել ՍԴ: Մեր տեղեկություններով՝ ընդդիմադիրների շուրջ ծավալվող գործընթացի մասով իշխանության ներսում, այնուամենայնիվ, տարակարծություններ կան, ու ոչ բոլորն են, որ ողջունելու են մանդատազրկության թեման օրակարգ բերելը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ որոշ ՔՊ-ականներ նպատակահարմար չեն գտնում Արցախի շրջափակման այս օրերին քննարկման առարկա քաղաքական ինտրիգներ պարունակող հարցերը դարձնել, այդ թվում նաեւ՝ մանդատազրկության թեման: Հարցի պարզաբանման համար «Ժողովուրդ» օրաթերթը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Դավիթ Դանիելյանին դիմեց: Նրա կարծիքով՝ ընդդիմադիր պատգամավորներին մանդատից զրկելու ու այդ առնչությամբ ՍԴ դիմելու գործընթացն օրենքի շրջանակներում է արվում: «Օրենքը նման հնարավորություն տալիս է, որպեսզի Սահմանադրական դատարանը քննի այդ հարցը: Կարծում եմ, որ մեր երկրի հարցն ինձ համար առնվազն դա չէ: Առաջնայինն այսօր Լաչինի միջանցքն օր առաջ բացելու հարցն է, երկրորդը՝ այն վտանգը, որ սպառնում է Հայաստանի անվտանգությանը»,- մեր ունեցած տեղեկություններն ըստ երեւույթին հաստատելով՝ ասաց ՔՊ-ական պատգամավորը:

ԱՌԵՐԵՍՈՒՄ ՉԿԱ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում 44-օրյա պատերազմի հերոս Ժորա Սահակյանի հայրը՝ Վահիդ Սահակյանը, հայտնեց, որ արդեն 1 ամիս է, ինչ «Եռաբլուր»-ում տեղի ունեցած միջադեպի քրեական վարույթով առերեսումները կասեցվել են, մինչդեռ ՀՀ վարչական դատարանում ակտիվ կերպով նշանակվել են ոստիկանության կողմից զինվորների ծնողներին դատի տալու նիստերը: Այսինքն՝ ոստիկանությունը համ քաշքշել է որդեկորույս մայրերին, համ էլ նրանց դատի է տվել: Հիշեցնենք, որ 2022 թվականի սեպտեմբերի 21-ին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում տեղի էր ունեցել քաշքշուկ ոստիկանների եւ 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողների միջեւ, որից հետո ոստիկանները, բռնությամբ քաշքշելով ծնողներին, հեռացնում էին պանթեոնից: Այս խայտառակ միջադեպով հարուցվեց քրեական գործ: Անցել է 5 ամիս, եւ մինչ օրս քրեական վարույթով որեւէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել: ՀՀ նախկին ոստիկանապետ, ներկայումս ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը ոչ միայն հրաժարական չտվեց, այլեւ պաշտոն ստացավ եւ այս պայմաններում էլ դատի է տվել ծնողներին, պահանջում է վարչական պատասխանատվության ենթարկել: Նկատենք, որ երեկ ՀՀ վարչական դատարանում, Ռոբերտ Մաքեյանի նախագահությամբ, 44-օրյա պատերազմի հերոս Մխիթար Գալեյանի հոր՝ Գարիկ Գալեյանի առաջին նիստն էր: Ի դեպ, նիստին, ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանի հանձնարարությամբ, ներկա էր նաեւ հանձնաժողովի փորձագետը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԱՄՆԱԳԵՏ ՉԿԱ

Արբանյակի կառավարման կենտրոն Հայաստանում այդպես էլ չստեղծվեց: Ինչպես հայտնի է, Հայաստանի առաջին արբանյակը Երկիր մոլորակի ուղեծիր դուրս բերվեց 2022-ի մայիսի 25-ին: Այդ ժամանակ իշխանություններն ամենաբարձր մակարդակով հայտարարեցին, թե հնարավորինս կարճ ժամկետներում կստեղծվի արբանյակի կառավարման կենտրոն, իսկ նախարարի կողմից ժամկետ նշվեց նաեւ 2022 թվականի տարեվերջը: Նկատենք, որ արբանյակի գործարկման օրվանից տարատեսակ ոչ միանշանակ կարծիքներ ու պնդումներ են հնչում արբանյակի պատկանելության, հնարավորությունների եւ նպատակահարմարության մասին, եւ, ամենակարեւորը, ինչպես նշել էր ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը, Ադրբեջանի սեպտեմբերյան ագրեսիայի որեւէ նկարահանում չի արվել կամ չի հրապարակվել ամենազոր արբանյակի կողմից: Խնդիրն այստեղ ոչ միայն կառավարման կենտրոն չունենալու հանգամանքն է, այլ նաեւ համապատասխան կադրերի առկայությունը: Այսինքն՝ երաշխիք չկա, որ եթե արբանյակի կողմից լուսանկարներ արվեն, մենք ունենք մասնագետներ, որոնք կարող են ուսումնասիրել դրանք կամ կառավարման կենտրոնում համապատասխան աշխատանք իրականացնել:

10 ԱՎՏՈՄԵՔԵՆԱ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը 10 ավտոմեքենա է գնել, որոնց համար պետական միջոցներից ծախսել է 222 մլն 600 հազար դրամ կամ ավելի քան 542 հազար դոլար: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նախարարությունը պայմանագիրը կնքել է «Կարկոմավտո» ընկերության հետ եւ յուրաքանչյուր ավտոմեքենայի համար վճարել

է 22 մլն 260 հազար դրամ գումար: Ավելին՝ մեզ հայտնի դարձավ, որ այդ ավտոմեքենաները հատուկ նշանակության են՝ նախատեսված դատապարտյալների եւ կալանավորված անձանց տեղափոխման համար: Բացի այս, նշենք, որ այդ ավտոմեքենաները «Ֆորդ» մակնիշի են, նոր են՝ 2022 թվականի արտադրության, եւ չշահագործված: Մյուս կողմից՝ նկատենք, որ ՔԿՀ-ներում ավտոմեքենաների քանակի խնդիր կա. ՔԿՀ-ներում բանտարկյալներին ուղեկցող ավտոմեքենաներ քիչ են եղել, եւ մի դատապարտյալին դատարան տեղափոխելուց հետո մյուս դատապարտյալը ստիպված է լինում ժամերով սպասել ավտոմեքենային՝ իր դատական նիստին մասնակցելու համար: Այդ ավտոմեքենաները զուրկ են տարրական պայմաններից. դատապարտյալի ինքնազգացողության վատթարացման ժամանակ պայմաններ չեն եղել, որպեսզի առաջին բուժօգնություն ցուցաբերվի: Եղել են դեպքեր, երբ դատապարտյալին դատարան տեղափոխելու ժամանակ մեքենան անսարք լինելու պատճառով խափանվել է:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՊԱՀԱՆՋՆԵՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Եվրամիությունը մտադիր է մեկ ամսից դիտորդական նոր առաքելություն ուղարկել Հայաստան, այս անգամ՝ ոչ թե երկու ամսով, այլ առնվազն երկու տարով: Այս մասին երեկ հայտնել է «Ազատություն» ռադիոկայանը՝ հղում անելով իր աղբյուրներին:

Ըստ «Ազատության» տեղեկությունների՝նոր առաքելության կազմում կլինի մոտավորապես երկու հարյուր եվրոպացի մասնագետ: Սուրեն Պապիկյանը եւ Արմեն Գրիգորյանը ընդունել են ԵՄ տեխնիկական գնահատման խմբի անդամներին: «Նրանց առաջնահերթությունն է նպաստել, որ Հայաստանի սահմանային գոտիներում ու հակամարտությունից տուժած շրջաններում միջադեպերը նվազեն, այդ տարածքներում ապրողների համար վտանգները կրճատվեն, եւ դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծվեն Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման համար», - ասված է հանձնախմբի եզրակացության մեջ: Կառույցն առաջարկել է ԵՄ արտաքին գործերի նախարարությանը առաջիկա օրերին մշակել գործողությունների հատուկ պլան, որը կհստակեցնի՝ ինչ միջոցներով է երաշխավորվելու առաքելության անվտանգությունը, ինչպես են գնահատվելու ռիսկերը, ինչ պաշտպանիչ սարքավորումներ են տրամադրվելու, եւ կամ անհրաժեշտության դեպքում ինչպես է կազմակերպվելու դիտորդների տարհանումը:

ArmLur.am-ին այս մասին մանրամասներ են հայտնի դարձել: Նախ հիշեցնենք, որ ԵՄ դիտորդական առաքելության առաջին խումբը Հայաստան էր ժամանել երկու ամսով 2022 թվականի հոկտեմբերի 14-ին: Դիտորդություն իրականացնող ԵՄ 40 քաղաքացիական փորձագետ տեղակայվել է երկու ամիս տեւողությամբ: ԵՄ դիտորդները Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ միջազգայնորեն ճանաչված սահմանի հայկական կողմում իրականացրել են շուրջ 175 պարեկային հերթափոխ: Այս դիտորդական առաքելությունը տեղակայվել էր՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում Հայաստանի եւ Ադրբեջանի, Եվրոպական խորհրդի եւ Ֆրանսիայի առաջնորդների միջեւ ձեռք բերված քառակողմ պայմանավորվածության համաձայն: Արդեն դեկտեմբերի 19-ին Եվրամիության արտաքին հարաբերությունների գծով գլխավոր հանձնակատար Ժոզեպ Բորելը հայտարարել էր, որ ԵՄ-ն մտադիր է Հայաստանում նոր՝ երկարաժամկետ առաքելություն տեղակայել քաղաքացիական մոնիթորիգի խմբի գործունեության ավարտից հետո:

Այսպիսով, մեր տեղեկություններով՝ ԵՄ դիտորդական առաքելությունը Հայաստան կժամանի արդեն փետրվար ամսվա ընթացքում. այս օրերին կատարվում են վերջին հստակեցումները: ԵՄ-ն Ադրբեջանից երաշխիքներ է ակնկալում, որ հայ-ադրբեջանական սահմանին միջադեպեր չեն լինի, եւ, այլ խոսքով ասած, դիտորդների ուղղությամբ կրակոցներ չեն լինի: Նախորդ անգամ Ադրբեջանը տվել էր այդ երաշխիքը եւ խոստացել ԵՄ-ին, որ սադրանքներ չեն լինի: Այս անգամ, սակայն, այդպես վարվելու համար Ադրբեջանը, մեր տեղեկություններով, ԵՄ-ին պահանջներ է ներկայացրել:

Նախ՝նկատենք, որ օրեր առաջ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հանդես էր եկել հրապարակային քննադատությամբ՝ ուղղված ԵՄ-ին՝ ասելով, թե վերջիններս խաբել են իրեն: Ադրբեջանի ղեկավարը, մասնավորապես, նշել էր. «Երկու ամսով էինք պայմանավորվել, իսկ դուք երկարաժամկետ առաքելություն եք տեղակայում: Միեւնույնն է, այդ առաքելությունը չի ամրապնդի տարածաշրջանի անվտանգությունը, բացասաբար կազդի ԵՄ-ի հովանու ներքո բանակցությունների վրա»:

Այսինքն՝ հրապարակային կերպով Ադրբեջանի նախագահը ճնշում է գործադրում ԵՄ-ի վրա, փորձում իր կանոնները թելադրել: Եվ, ահա, Ադրբեջանի պայմաններից մեկն այն է, որ պետք է հրապարակվելուց առաջ ընթերցի ԵՄ առաջին դիտորդական առաքելության զեկույցը եւ միայն դրանից հետո կորոշի՝ համաձայնություն տալ, թե ոչ:

Ընդգծենք՝ Հայաստանի սուվերեն տարածքի ներսում է տեղակայվում առաքելությունը, եւ այստեղ Ադրբեջանի համաձայնությունը չպետք է էական լինի, սակայն փաստացի նման պահանջներ կան:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԱՅՑԵԼԵԼ Է ՊՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն երեկ այցելել է Պաշտպանության նախարարություն՝ գերատեսչության 2022թ. գործունեության հաշվետվությունը քննարկելու:

Խորհրդակցությանը մասնակցել են փոխվարչապետներ Մհեր Գրիգորյանը եւ Տիգրան Խաչատրյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանը, ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, Պետական վերահսկողական ծառայության ղեկավար Ռոմանոս Պետրոսյանը, Զինված ուժերի բարձրագույն սպայակազմը եւ պաշտոնատար այլ անձինք:

Պատասխանատուները ներկայացրել են 2022 թվականին պաշտպանական գերատեսչության կողմից իրականացված բարեփոխումներն ու այլ ուղղություններով կատարված աշխատանքները:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ՆՈՐ ԴԵՍՊԱՆ

Հնդկաստանի վարչապետի պաշտոնական թարգմանիչ Նիլակշի Սախա Սինհան Հայաստանում Հնդկաստանի նոր դեսպան է նշանակվել:

Նիլակշի Սախա Սինհան լավ տիրապետում է հինդիին, անգլերենին, բենգալերենին եւ ֆրանսերենին: Նշվում է, որ նա տիրապետում է 15 լեզվի եւ վարչապետին ուղեկցել է արտասահմանյան 14 ուղեւորությունների ժամանակ: Նա ներկայումս զբաղեցնում է Արտաքին գործերի նախարարության քարտուղարի տեղակալի պաշտոնը: «Տիկին Նիլակշի Սախա Սինհան նշանակվել է Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի հաջորդ դեսպան»,- ասված է ԱԳՆ պաշտոնական հաղորդագրության մեջ: Ակնկալվում է, որ Սախան շուտով կանցնի իր պարտականությունների կատարմանը: Բացի այդ, Մ. Շրիդխարանը նշանակվել է Ադրբեջանում Հնդկաստանի հաջորդ դեսպան: Նա ներկայումս նույնպես զբաղեցնում է Արտաքին գործերի նախարարության քարտուղարի տեղակալի պաշտոնը:

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ ԵՆ

Շրջափակված Արցախում մնացել են նաեւ օտարերկրյա քաղաքացիներ: Այս մասին սոցցանցի իր էջում հայտնում է ԱՀ պետնախարար Ռուբեն Վարդանյանը: Ընտանիքները, այդ թվում՝ երեխաների հետ, արգելափակված էին մեկ ամսից ավելի: Արցախի կառավարությունը ռուս խաղաղապահների հետ միասին երկար ժամանակ նախապատրաստում էր եւ երեկ կազմակերպել է նրանց մի մասի վերադարձը հայրենիք: Արցախի 120.000 քաղաքացիների, այդ թվում՝ 30.000 երեխաների համար անմարդկային շրջափակումը շարունակվում է:

ԴԱՏԱՎՈՐԻ ԳՈՐԾ

ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՑՈՒՅՄՈՒՆՔԸ՝ ԱԺ-ՈՒՄ

Ինչպես հայտնի է, դատավոր Արուսյակ Ալեքսանյանի գործը մտել է դատարան, եւ Հակակոռուպցիոն դատարանում դատական նիստերը մեկնարկել են: Դատավոր Արուսյակ Ալեքսանյանը արդեն երեք ամիս է՝ կալանքի տակ է: Դատավոր Արուսյակ Ալեքսանյանի իրական վարույթով ԱԱԾ-ում հարցաքննվել է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Գագիկ Պողոսյանը: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է Գագիկ Պողոսյանի ցուցմունքը:

Հարց

-Ասացեք, թե երբվանի՞ց եք աշխատում Ձեր հիշյալ պաշտոնում, Արուսյակ Ալեքսանյանի հետ ի՞նչ փոխհարաբերությունների մեջ եք գտնվում:

Պատասխան

-Հարցին պատասխանում եմ, որ 1996թ.-ից աշխատում եմ դատավորի պաշտոնում, իսկ 2022թ.-ի օգոստոսի 10-ից աշխատում եմ որպես Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի պաշտոնակատար: Արուսյակ Ալեքսանյանին անձնապես չեմ ճանաչում, միայն գիտեմ, որ դատավոր է:

Հարց

-Ասացեք, թե դատարան ներկայացված միջնորդություններն ինչ կարգով են մակագրվում:

Պատասխան

-Հայտնում եմ, որ աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից մինչեւ ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում, դատարան ներկայացված միջնորդությունները մակագրում եմ անձամբ՝ մակագրման թերթիկի վրա նշում կատարելով համապատասխան դատավորի անվան դիմաց, իսկ ժամը 18:00-ից հետո եւ ոչ աշխատանքային օրերին դատարան ներկայացված միջնորդությունները մակագրում եմ էլեկտրոնային եղանակով: Կոնկրետ ոչ աշխատանքային օրերին «Աջափնյակ-1» նստավայրում ներկայացված միջնորդությունները մուտք են արվում «Աջափնյակ-1» նստավայրի գրասենյակում, էլեկտրոնային եղանակով պատրաստվում են մակագրման թերթիկներ, որոնք «Աջափնյակ-1» նստավայրի գրասենյակի էլեկտրոնային կայքի միջոցով ուղարկվում են դատարանի «Կենտրոն» նստավայրի գրասենյակի էլեկտրոնային կայքին, որը գործարկում է գրասենյակի ղեկավարը: Գրասենյակի ղեկավարը էլեկտրոնային մակագրման թերթիկը «Կենտրոն» նստավայրի գրասենյակի էլեկտրոնային կայքով ուղարկում է իմ անձնական էլեկտրոնային կայքին: Ես իմ անձնական էլեկտրոնային կայքով կատարում եմ մակագրություն, համապատասխան դատավորի անվան դիմաց նշում եմ կատարում եւ հետ եմ ուղարկում «Կենտրոն» նստավայրի գրասենյակի էլեկտրոնային կայքին, որպեսզի գրասենյակի ղեկավարը ուղարկի «Աջափնյակ-1» նստավայրի գրասենյակի էլեկտրոնային կայքին: «Աջափնյակ-1» նստավայրի աշխատակիցը, ստանալով էլեկտրոնային մակագրման թերթիկը, այն տպում է եւ միջնորդության հետ հանձնում է կամապատասխան դատավորին կամ նրա աշխատակազմին: Գործավարության կանոնակարգի համաձայն՝մակագրված միջնորդությունները հանձնվում են համապատասխան դատավորին կամ նրա օգնականին:

Հարց

-Ասացեք, թե ինչ կարգով կամ նորմատիվ իրավական ակտով եք ղեկավարվում նույն անձի վերաբերյալ ներկայացված միջնորդությունները նույն դատավորին մակագրելու հարցում:

Պատասխան

-Հարցին պատասխանում եմ, որ դատարան ներկայացված միջնորդությունները հիմնականում մակագրվում են տվյալ օրը հերթապահ դատավորին. բացառություններ լինում են, երբ, օրինակ, հերթապահող դատավորը ծանրաբեռնված է լինում, ապա տվյալ օրվա միջնորդությունների մի մասը մակագրվում է այլ դատավորի: Նույն անձի վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունները նույն դատավորին մակագրելու հարցի վերաբերյալ իրավական կարգավորում չկա, միայն կա ներքին կարգով սահմանված աշխատանքային կարգ, որը նախապես համաձայնեցվել է դատավորների հետ այն մասով, որ կալանքի հետ կապված բոլոր միջնորդությունները մակագրվում են նույն դատավորին, այսինքն՝ եթե մի դատավոր քննել է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ միջնորդությունը, ապա դրանից հետո դատարան ներկայացված նույն մեղադրյալի հետ կապված կալանքի ժամկետը երկարացնելու կամ կալանքը վերացնելու, գրավով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունների քննարկումը մակագրվում է նույն դատավորին: Այս պարագայում եւս լինում են բացառություններ, օրինակ՝ երբ սկզբնական կալանքի միջնորդությունը քննած դատավորը երկարացման ժամանակ գտնվում է արձակուրդում, գործուղման մեջ կամ հիվանդ է, ապա տվյալ միջնորդության քննարկումը մակագրվում է հերթապահող դատավորներից որեւէ մեկին՝ հաշվի առնելով տվյալ դատավորի ծանրաբեռնվածությունը: Նման պայմաններում երբ դատավորին մակագրվում է օրինակ կալանքի ժամկետի երկարացում, որի սկզբնական կալանքը քննել է այլ դատավոր, եթե չկան հիշյալ բացառության դեպքեր, ապա տվյալ դատավորը, որպես կանոն, հետ է վերադարձնում միջնորդությունը՝ խնդրելով այն վերամակագրել սկզբնական միջնորդությունը քննած դատավորին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԵՏԱՄՈՒՏ Է

ԵՆԹԱՐԿՎԵԼ ԵՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՑՈՒՅԺԻ

ՀՀ քննչական կոմիտեն հետամուտ է համակարգն իրենց գործառութային պարտականությունների կամ կարգապահական կանոնների նկատմամբ անբարեխիղճ, անպատասխանատու կադրերից թոթափելուն:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի հրամաններով՝ ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար (քննիչի) պաշտոն զբաղեցնող երկու անձի նկատմամբ կիրառվել է «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ:

Իրականացված կարգապահական վարույթով հիմնավորվել է, որ Կոմիտեի տարածքային ստորաբաժանումներից մեկի հատկապես կարեւոր գործերով քննիչը մի քանի քրեական վարույթներով, առանց իրավաչափ նպատակի, տեւական ժամանակ դրսեւորել է անգործություն:

Առանձին վարույթներով 45 օրից մինչեւ ավելի քան 6 ամիս շարունակ քննչական եւ այլ վարութային գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի, ինչպես նաեւ հսկող դատախազի օրինական, առարկայական ցուցումների առկայության պայմաններում նա չի ապահովել դրանց պահանջների ամբողջական կատարումը, չի պահպանել քննության ողջամիտ ժամկետները, չի դրսեւորել պատշաճ ջանասիրություն: Վերջինս քրեական վարույթները թողել է անշարժ վիճակում, իսկ որոշ քրեական վարույթներով՝ բավարարվել սակավաթիվ քննչական գործողություններ կատարելով: Բացի այդ, ՀԿԳ քննիչն առանց հիմնավոր պատճառի չի ներկայացել հերթական ատեստավորմանը:

Մյուս դեպքում հարուցված կարգապահական վարույթով հիմնավորվել է, որ Կոմիտեի մեկ այլ տարածքային ստորաբաժանման քննիչը, նշանակված լինելով այդ պաշտոնին, պատշաճ կարգով իրազեկված լինելով պաշտոնի նշանակվելու հրամանի մասին, ընդհանրապես չի ներկայացել աշխատանքի վայր, չի ներկայացրել գրավոր բացատրություն՝ անհարգելի բացակայությունների վերաբերյալ, չի կատարել զբաղեցրած պաշտոնից բխող գործառութային պարտականությունները, ինչի պայմաններում տուժել է արդարադատության եւ նախաքննության շահը:

Հաշվի առնելով վերոնշյալ խախտումների բնույթը՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահը Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին ներկայացրել է վերոնշյալ երկու քննիչների նկատմամբ օրենքով սահմանված ամենախիստ՝ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժի կիրառման հնարավորության վերաբերյալ միջնորդություններ:

Կարգապահական հանձնաժողովն իր որոշումներով բավարարել է միջնորդությունները, եւ, ՀՀ ՔԿ նախագահի հրամաններով, նշված երկու անձինք ազատվել են զբաղեցրած պաշտոններից:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ԹԱՔՑՐԵԼ Է ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐ

Հ.Բ.-ն, 2014 թվականից մինչեւ 2020 թվականի դեկտեմբերը զբաղեցնելով ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի, այնուհետեւ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության միացյալ շտաբի պետի տեղակալի պաշտոնները, ունենալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն, հաշվետու ժամանակահատվածում իր անձնական հաշվեկշռին ավելացրել է ենթադրաբար իր օրինական եկամուտները գերազանցող եւ ողջամտորեն չհիմնավորվող գույք՝ դրամական միջոցներ:

Հ.Բ.-ն թաքցրել է նաեւ հայտարարագրման ենթակա վերոնշյալ տվյալները՝ այդ մասին համապատասխան գրառումներ չկատարելով իր կողմից ներկայացված հայտարարագրերում:

Հ.Բ.-ի կողմից առերեւույթ ենթադրյալ հանցանքներ կատարելու փաստերը ձեռք են բերվել Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի (ՔԿ ԶՔԳՎ ՀԿԳ) քննության վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակում դատախազի կողմից տրված հանձնարարության հիման վրա ձեռնարկված քննչական եւ այլ վարութային գործողությունների արդյունքում:

Դեպքի առթիվ 2023 թվականի հունվարի 13-ին ՔԿ ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչությունում 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասով եւ 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով (ապօրինի հարստանալը, հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը), որոնք համապատասխանում են գործող Քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածի 1-ին մասին եւ 444-րդ հոդվածի 2-րդ մասին, նախաքննություն իրականացնող մարմնի կողմից նախաձեռնվել է քրեական վարույթ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 16-ից 17-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 55 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՊԱԳԱՆ ՀԱՍԵԼ Է ԴԻԼԻՋԱՆ

Հունվարի 10-ին Դիլիջանի համայնքապետարանում կայացել է 2023 թվականի առաջին գործակարգավարական խորհրդակցությունը: Դիլիջանի համայնքապետարանի աշխատողները, խորհրդակցության մասնակիցները զարմանքով տեսել են, որ Դիլիջանի խոշոր համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը վիրահատել է իր քիթը: Դա Դիլիջանի համայնքապետի կյանքում նոր տարում միակ փոփոխությունը չէ: 2022թ. դեկտեմբերի 1-ին Դիլիջան համայնքի ավագանին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի եւ 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով, որոշել է Դիլիջան համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2023 թվականի համար սահմանել ամսական 465 հազար դրամ: Հետաքրքիր է, որ ավագանու նույն այդ նիստի որոշմամբ հաստատվել է Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը եւ պաշտոնային դրույքաչափը, որն իր մեջ ներառում է նաեւ համայնքի ղեկավարի աշխատավարձը: Այնուամենայնիվ, ավագանու առանձին որոշմամբ սահմանվել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը: Ուշագրավ է, որ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափի բարձրացմանը կողմ են քվեարկել նիստին ներկա ավագանու բոլոր 14 անդամները: 1984թ. ծնված Դ. Սարգսյանը վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. փետրվարի 26-ին նշանակվել է Դիլիջան խոշոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար, նույն թվականի հոկտեմբերի 17-ին կայացած համայնքի ավագանու համամասնական ընտրությունների արդյունքներով ձեւավորված ավագանու կողմից ընտրվել է համայնքի ղեկավար: Նա ավարտել է Դիլիջանի պետական քոլեջը, այժմ հեռակա սովորում է Հայաստանի Եվրոպական համալսարանում, ՔՊ կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավարն է:

ՉՀԵՌԱՆԱԼՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Բերդ քաղաքի նստավայրում ընթանում է Նարեկ Պետրոսյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2020թ. հոկտեմբերի 14-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ զորամասի պահպանության շրջանի Հատիս կոչվող մարտական դիրքի դիմաց ծառայողական պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ նույն վաշտի պայմանագրային զինծառայող Արտաշես Մակարյանի կողմից մարտական հերթապահությանը ոչ սթափ վիճակում ներկայանալու պատճառով ծեծի է ենթարկել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող կրտսեր սերժանտ Ա. Մակարյանին՝ բռունցքով երեք անգամ հարվածելով վերջինիս կրծքավանդակին, պատճառելով առողջության թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ: Ն. Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 5-րդ մասով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԱՇԱՌՔ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությամբ հիմնավորվել է, որ ՍՊԸ ընկերության տնօրեն Ռ. Հ.-ն իր օգտին ապօրինի գործողություն կատարելու, այն է՝ ժամկետանց հավի ձուն ոչնչացնելու գործընթացը ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգի խախտմամբ կազմակերպելու համար 2022 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի մարզային կենտրոնի ղեկավար Ա. Մ.-ին տվել է 250.000 ՀՀ դրամ կաշառք:

Նախաքննությամբ պարզվել է, որ վերը նշված ՍՊ ընկերության կողմից ՌՌ արտահանման ենթակա մեկ բեռնատար հավի ձվի խմբաքանակի տեղափոխման հետ կապված խնդիրների պատճառով ձվի պիտանելիության ժամկետն անցել է, եւ այն հետ է վերադարձվել ՀՀ ոչնչացման նպատակով: ՍՊ ընկերության տնօրեն Ռ. Հ.-ն հիշյալ ժամկետանց ձվի խմբաքանակը չի ոչնչացրել, այլ փոխարենը պիտանելիության ժամկետն անցած՝ավելի հին ձվի չնչին խմբաքանակ է ոչնչացրել: Դրանից հետո՝2022 թվականի նոյեմբերի 22-ին, ՍԱՏՄ Արմավիրի մարզային կենտրոնի գլխավոր մասնագետ-տեսուչ Գ. Պ.-ն կազմել է արձանագրություն այն մասին, թե, իբր, պիտանելիության ժամկետը լրացած 302.000 հատ ձվի ամբողջ խմբաքանակը ոչնչացվել է, ինչն այնուհետեւ հաստատել է իր ստորագրությամբ, որի դիմաց տեսչական մարմնի Արմավիրի մարզային կենտրոնի ղեկավարի դրդմամբ ՍՊ ընկերության տնօրեն Ռ. Հ.-ից որպես կաշառք ստացել է մեկ արկղ ձու: Այնուհետեւ Ա. Մ.-ն կեղծ տեղեկություններ պարունակող՝ վտանգավոր արտադրանքի ոչնչացման վերը նշված ակտը դրել է պաշտոնական շրջանառության մեջ եւ ուղարկել ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին:

Ոչնչացման գործընթացը սահմանված կարգի խախտմամբ կազմակերպելու հետեւանքով ժամկետանց ձվի որոշ մասն ըստ էության իրացվել է ՀՀ շուկայում: 26.12.2022թ.-ին ՀՀ ՍԱՏՄ Արմավիրի մարզային կենտրոնի ղեկավար Ա. Մ.-ն, ՍԱՏՄ երկու պաշտոնատար անձինք եւ ՍՊ ընկերության տնօրեն Ռ. Հ.-ն ձերբակալվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի կողմից:

Վերը նկարագրված հանցավոր արարքների կատարման համար Ա. Մ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 445-րդ հոդվածի 1-ին մասով, Գ. Պ.-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ 445-րդ հոդվածի 1-ին մասով, եւ Ռ. Հ.-ին՝ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով /երկու դրվագ/ եւ 46-445-րդ հոդվածի 1-ին մասով: Ռ. Հ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, իսկ Գ. Պ.-ի նկատմամբ որպես խափանման միջոցներ համակցված կիրառվել են ՀՀ-ից բացակայելն արգելելը եւ պաշտոնավարումը կասեցնելը: Հիշյալ երեք մեղադրյալների վերաբերյալ քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին, ում կողմից այն հաստատվել է, եւ նյութերն ուղարկվել են դատարան:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

ՆԱՀԱՏԱԿՎԱԾՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

2022 նոյեմբերի 23-ին ArmLur.am-ը գրել էր, որ ՀՀ ոստիկանությունը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողների, եւ պահանջում է, որ դատարանը զոհված զինծառայողների ծնողներ Գարիկ Գալեյանին, Վահիդ Սահակյանին,Գրիգոր Ջավախյանին, Գեղամ Ղազարյանին ենթարկի ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի պահանջով վարչական պատասխանատվության:

Նկատենք, որ ոստիկանությունը բավականին ակտիվ կերպով մտել է դատարան եւ բարձրացնում է ծնողներին պատասխանատվության ենթարկելու հարցը, իսկ ո՞վ պետք է պատասխան տա ծնողների նկատմամբ բռնության դեպքով:

Այդ միջադեպից անցել է 5 ամիս, եւ մինչ օրս քրեական վարույթով որեւէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել. ՀՀ նախկին ոստիկանապետ, ներկայումս ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը հրաժարական չի տվել եւ այս պայմաններում դատի է տվել ծնողներին. սա է Հայաստանի արդարադատությունը: Իսկ թե ինչ կանի դատարանը, կհետեւենք զարգացումներին:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 2022 թվականի սեպտեմբերի 21-ին «Եռաբլուր»-ում տեղի ունեցած խայտառակ միջադեպի առիթով ծառայողական քննությունը կասեցվել է: Հիշեցնենք, որ «Եռաբլուր» զինվորական պանթեոնում տեղի ունեցած քաշքշուկի առիթով ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում ծառայողական քննություն էր սկսվել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում գործի կասեցման մասին մեր ունեցած տեղեկությունը հաստատեց ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Արա Ֆիդանյանը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ երբ Քննչական կոմիտեում քրեական գործ կամ վարույթ է հարուցվել, ոստիկանությունը որոշել է Ներքին անվտանգության վարչությունում առկա քննությունը կասեցնել մինչեւ այդ քրեական գործի ավարտը:

Այսինքն՝ Քննչական կոմիտեի քննության ավարտից հետո ոստիկանության ղեկավարությունը իր համապատասխան քայլերը կիրականացնի:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ միջադեպից միայն մի քանի օր անց հարուցված քրեական գործով մինչեւ օրս որեւէ ոստիկան կամ հրաման տվող սպա պատասխանատվության չի ենթարկվել: Նշենք, որ կան ծնողներ, որոնց մարմնական վնասվածքներ ստանալու փաստը փորձաքննությամբ հաստատված է, ծնողները տուժող են ճանաչվել, սակայն ոչ ոք պատասխանատվություն չի կրել առ այսօր:

Թերեւս չի էլ լինի պատիժ, քանի որ այդ ծեծն ակնհայտորեն ուներ քաղաքական հրահանգ, ու այդ մասին վկայում է շուրջ երկու ամիս տեւող քննությունը, որի արդյունքում մինչ օրս չկա մեղադրյալ:

Երեկ Վարչական դատարանում Գարիկ Գալեյանի գործով առաջին նիստն էր:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

2022 Թ.՝ 111687 ԸՆԹԵՐՑՈՂ

Նախարարության ենթակայության 12 գրադարանները ամփոփել են 2022 թվականի արդյունքները: Ըստ այդմ՝ 2022 թ. գրադարանները ունեցել են 111687 ընթերցող, 24010 էլեկտրոնային շտեմարաններից օտվող, սպասարկված միավորների թիվը կազմել է 3 միլիոն 70 հազար 42 միավոր, 82530՝ գրքերի համալրում, 2310՝ հրատարակված գրքեր, թվայնացված էջերի քանակ՝ 1 670 826: «Հայ գիրք» եւ «Հայ պարբերական մամուլ» շտեմարաններում թվայնացված էջերի քանակը կազմել է 12 միլիոն 195 հազար 435 էջ:

Նախորդ տարի Հայաստանի ազգային գրադարանում առավել մեծ պահանջարկ են ունեցել հայ ժամանակակից հեղինակներից Սյունե Սեւադան, Նարինե Աբգարյանը, Մելիք Հակոբյանը, Աշոտ Աղաբաբյանը: Արտասահմանյան գրողներից 2022 թվականին առաջատար են եղել Խալեդ Հոսեյնին եւ Ագաթա Քրիստին: Ընթերցողների մեջ գերակշռող խումբը 19-25 տարեկաններն են: Հայաստանի ազգային գրադարանը հրապարակել է նաեւ «Հայաստանի գրադարանները 2021 թվականին» աշխատանքների վիճակագրական վերլուծություն ձեռնարկը:

Վերլուծական տվյալներում ընդգրկվել են Հայաստանի ազգային, Խնկո Ապոր անվան ազգային մանկական, ՀՀ ԳԱԱ հիմնարար, գիտատեխնիկական եւ գիտաբժշկական գրադարանների տարեկան ամփոփ տվյալները: Գրքում ընդրկվել են 10 մարզային գրադարանների, ինչպես նաեւ Երեւան քաղաքի վարչական շրջանների 23 գրադարանների տվյալները: Գրադարանների վիճակագրական ամփոփ տվյալներում առանձին ներկայացվել են հանրապետության բուհական գրադարանները, ինչպես նաեւ Արցախի Հանրապետության տարածքում գործող գրադարանները: Գիրքը կազմել եւ աղյուսակները համադրել է Լիլիթ Մուրադյանը: Համաձայն գրքում զետեղված հաշվետվությունների՝ ՀՀ-ում 2021 թ. գործել է հանրային բնույթի 651 գրադարան, որից 10՝ մարզային, 117՝ քաղաքային, 502՝ գյուղական, 22՝ մանկական:

ԱՆԺԱՄԿԵՏ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

Զենքի առեւտրի լիցենզիաներն այսուհետ տրամադրվելու են անժամկետ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ ոստիկանությունն առաջարկում է կառավարության՝ 2011 թվականի հունվարի 13-ի թիվ 12-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի մեջ կիրառվող հասկացությունները համապատասխանեցնել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի դրույթներին:

Այսինքն՝ այսուհետ լիցենզիա ստանալու համար հայտատուի կողմից լիցենզավորող մարմին է ներկայացվելու զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների եւ ֆիզիկական թերությունների բացակայության վերաբերյալ բժշկական եզրակացություն՝ նարկոլոգիական եւ հոգեբուժական բժշկական հաստատություններում հաշվառման մեջ չգտնվելու վերաբերյալ բժշկական տեղեկանքների փոխարեն:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԻԾԸ ՇՐՋԱՆԱՌՎԵԼ Է

Հայաստանի ներդրումային խորհուրդը ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ մշակել է օրենսդրական նախագիծ, որով առաջարկում է մասնակի փոխհատուցել Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերում գտնվող հյուրանոցներից օգտված տնտեսվարողների ծախսերը: Նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման e-draft հարթակում, որտեղ կարծիքներ եւ առաջարկություններ կարող են հայտնել բոլոր հետաքրքրված կողմերը:

ՀՀ ներդրումային խորհրդի տարածած հաղորդագրությամբ առաջարկվում է մինչեւ 2023 թվականի մայիսի 10-ը ընկած ժամանակահատվածում Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերում գործող հյուրանոցներից օգտված տնտեսավարողներին տրամադրել փոխհատուցում՝ արդեն իսկ վճարված գումարի 60%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 3,000,000 դրամ): Նշվում է, որ աջակցության այս միջոցառումը կապահովի լրացուցիչ մոտ 2500 զբոսաշրջիկի այցելություն Սյունիքի եւ Վայոց ձորի մարզեր, որոնք կստեղծեն լրացուցիչ եկամուտներ ինչպես հյուրանոցային տնտեսության, այնպես էլ հանրային սննդի օբյեկտների եւ այլ տնտեսվարողների համար: Սա առավել կարեւոր է սահմանամերձ մարզերում, ինչպիսիք են Վայոց ձորը եւ Սյունիքը: Այս մարզերը զբոսաշրջային հոսքերի նկատելի անկում են արձանագրում՝ պայմանավորված Արցախի շուրջ իրավիճակով եւ զարգացումներով: Ակնկալվում է, որ այս առաջարկից կօգտվեն հիմնականում ընկերություններ, որոնք կկազմակերպեն կորպորատիվ քննարկումներ, կարճատեւ դասընթացներ կամ այլ աշխատանքային հանդիպումներ թիրախային մարզերի հյուրանոցներում եւ հյուրատներում: Ընդ որում՝ նշված ծառայություններից պետք է փաստացի օգտված լինեն ընկերություններ, որոնց առնվազն 5 աշխատակից օգտվում է տվյալ ծառայությունից:

Առաջարկվող բարեփոխումների, քննարկվող հարցերի ընթացքի մասին հավելյալ թարմացված տեղեկատվություն կարող եք գտնել կայքի «Նորություններ» բաժնում, արդեն ընդունված կամ առաջարկվող բարեփոխումների ցանկը կարող եք գտնել կայքի «Բարեփոխումներ» բաժնում:

ԴՊՐՈՑՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է 7 ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ 2008 թվականից իրականացվել է «Երաժշտական եւ արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում եւ հրատարակում» ծրագիրը: Այն մասնագետների կողմից գնահատվել է որպես բարձր արդյունավետություն ունեցող ծրագիր եւ իրականացվում է հատուկ այդ նպատակով կազմված մասնագիտական հանձնախմբի օժանդակությամբ:

Ծրագրի շրջանակում 2008-2022 թվականներին պետական պատվերով հրատարակվել է 325 անուն գրականություն:

Ծրագրի իրականացումը պայմանավորված է մշակութային կրթության որակի բարելավման, ժամանակակից պահանջներին համահունչ ուսումնամեթոդական ձեռնարկների, առարկայական ծրագրերի, աշխատանքային տետրերի, դասագրքերի, ժողովածուների եւ ուղեցույցների մշակման եւ կիրառման, արտադպրոցական ուսումնական հաստատությունների գրքային ֆոնդի համալրման անհրաժեշտությամբ: Այն միտված է նաեւ գեղարվեստական կրթության ոլորտում ուսուցման նոր մեթոդների վերաբերյալ մասնագիտական շրջանակների իրազեկմանը, դասական եւ ժամանակակից արվեստագետների ստեղծագործությունների եւ պրակտիկ նյութերի տարածմանն ու հանրահռչակմանը:

Ծրագրի իրականացմամբ լուծվում է նաեւ հայալեզու մասնագիտական գրականության հրատարակման եւ տարածման խնդիրը, ապահովվում են նոր դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների, ժողովածուների եւ գրականության հասանելիությունն ու մատչելիությունը: «Երաժշտական եւ արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում եւ հրատարակում» ծրագրի շրջանակում 2022 թ. հրատարակվել է 7 ուսումնամեթոդական ձեռնարկ՝ Արարատ Աղասյան «Արվեստի պատմություն. կերպարվեստ (Գիրք 2)», Նաիրա Հովհաննիսյան, Մարիա Դիվանյան, Սրբուհի Բաբայան, Աշխեն Բոյաջյան «Պատմակենցաղային պարեր, դասական պար, հայկական ժողովրդական պար, ժողբնորոշ պար» (առարկայական ծրագրեր)», Անահիտ Կիրակոսյան «Հայ ժողովրդական նվագարաններ», Զենի Ասատրյան (կազմող) «Հայ կոմպոզիտորների մանկական երգեր», Նունե Պողոսյան (կազմող) «Քրիստոմատիա կիթառի համար» (1-7 դասարաններ), Սուրեն Խորոզյան (կազմող) «Քրիստոմատիա կլարնետի համար» (1-7 դասարաններ), Աղավնի Հովակիմյան «Քրիստոմատիա սանթուրի համար (2-5 դասարաններ):

Նշենք, որ հրատարակված ձեռնարկներն անվճար կտրամադրվեն հանրապետության արտադպրոցական ուսումնական հաստատությունների գրադարաններին: Տեղեկացնենք նաեւ, որ 2023 թվականին նախատեսվում է հրատարակել 11 ուսումնամեթոդական ձեռնարկ:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

Մի՛ ԼՌԵՔ

ՀԱՅ ՀԱՅՏՆԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԵՄ

«Տղե՛րք ջան, բարձրաձայնե՛ք Արցախի խնդրի մասին, տարածե՛ք ձեր էջերում, խնդրում եմ, խոսե՛ք, մի՛ լռե՛ք»,- կոչ է արել երգիչ Անդրեն՝ դիմելով աշխարհում մեծ լսարան եւ ճանաչում ունեցող հայ հայտնիներին:



«Հենրիխ Մխիթարյան, Արթուր Աբրահամ, Լեւոն Արոնյան, Ռազմիկ Ամյան, տղե՛րք ջան, բարձրաձայնե՛ք Արցախի խնդրի մասին, տարածե՛ք ձեր էջերում, խնդրում եմ, խոսե՛ք, մի՛ լռեք : Սիրելի՛ հետեւորդներ ջան, մեկնաբանություններում նշե՛ք բոլոր հայ հայտիներին, թող միանան»,-մասնավորապես գրել էր Անդրեն:

Ի դեպ, նշենք, որ Լաչինի միջանցքի փակման հետ կապված՝ իրենց բողոքի ձայնն էին բարձրացրել նաեւ Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության դերասանները, երգիչները եւ հասարակ քաղաքացիները: Նրանք, «Բացե՛լ կյանքի ճանապարհը», «Ո՛չ ցեղասպանությանը», «Մենք ենք Արցախը» վանկարկելով, Ազատության հրապարակից երթով գնացին դեպի Ռուսաստանի, Ֆրանսիայի դեսպանատներ, այնուհետեւ հասան ՄԱԿ-ի գրասենյակ եւ բողոքի ակցիաներ արեցին՝ պահանջելով, որ ստիպեն Ադրբեջանին բացել Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը: Ակցիայի մասնակիցներն էին Տոմա Պետրոսյանը, Պոնչ Իսպիրյանը, Արտեմ Վալտերը եւ ուրիշներ:

Ակցիայի մասնակիցների պնդմամբ՝ իրենք ցանկանում են աշխարհի ուշադրությունը հրավիրել Լաչինի միջանցքում տեղի ունեցող իրադարձություններին:

Հիշեցնենք, որ մեկ ամսից ավելի է, ինչ Ադրբեջանը փակել է Արցախը Հայաստանի եւ արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ ապօրինաբար շրջափակելով Արցախը եւ արհեստականորեն ստեղծելով ծանր հումանիտար պայմաններ Արցախի 120-հազարանոց բնակչության համար: Նման գործողություններով ադրբեջանական կողմն Արցախի Հանրապետության բնակչությանը փաստացի զրկել է արտաքին աշխարհի հետ շփման միակ հնարավորությունից՝ 120 հազար բնակչությանը թողնելով լիակատար շրջափակման մեջ՝ դրանից բխող հումանիտար, առողջապահական եւ տնտեսական բոլոր հետեւանքներով հանդերձ:

Ադրբեջանական կողմը խափանել է նաեւ Արցախի գազամատակարարումը՝ շարունակելով Արցախի հայաթափմանն ուղղված գործողությունները:

Ավելին՝ հունվարի 20-ից Արցախում բրինձը, մակարոնեղենը, հնդկաձավարը, շաքարավազը եւ ձեթը կվաճառվեն միայն կտրոնով: Յուրաքանչյուր քաղաքացի կկարողանա ստանալ միանգամից 9 կտրոն: Կտրոնների տրամադրումը կատարվել է հունվարի 17-ից:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Android

ՁԱՅՆԱԳՐԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Android բջջային օպերացիոն համակարգում ավելացվել է սեփական ձայնը ձայնագրելու եւ զարթուցիչում եւ ժամանակաչափում երաժշտության փոխարեն հենց դա օգտագործելու հնարավորություն:



Իրականում օգտատերերը նախկինում եւս կարող էին իրենց սեփական աուդիո ֆայլերն այդ նպատակով օգտագործել, բայց դա անելն ավելի դժվար էր, քան հիմա. դրա համար անհրաժեշտ էր File Manager-ի օգնությամբ պատճենել անհրաժեշտ աուդիո ֆայլերը եւ ձայնի կարգավորումների մենյուի միջոցով ավելացնել դրանք եւ սահմանել որպես զարթուցիչի ազդանշան:

Այժմ ձայնի ձայնագրման գործառույթը հայտնվել է անմիջապես «Ժամացույց» հավելվածում, ինչը զգալիորեն կհեշտացնի զարթուցիչի եւ ժամանակաչափի համար հատուկ ազդանշանի տեղադրման գործընթացը. հիմա արդեն կարելի է ձայնագրիչի վրա ձայնագրել ցանկացած ձայն, այդ թվում՝ ինչ-որ հաղորդագրություն, կատվի մլավոց կամ ցանկացած այլ ձայն, որ կարող է ձեր մտքով անցնել:

Առայժմ նորամուծությունը հասանելի է միայն Google Pixel շարքի սմարթֆոններում: Այնուամենայնիվ, փորձագետները հույս ունեն, որ այլ արտադրողների Android սարքերը նույնպես կստանան այն: Նշենք, որ Apple-ի iPhone սմարթֆոնները դեռեւս չունեն զանգի, զարթուցիչի կամ ծանուցման ձայնի համար ցանկացած ձայն օգտագործելու հնարավորություն:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ «ՇՈՈՒ» Է ՄԿՍՈՒՄ

Երեւանի նախկին քաղաքապետ, կատակերգակ դերասան Հայկ Մարությանը 2023 թվականը որոշել է սկսել նոր ներկայացումով: Նախորդ տարվանից հայտնի «Քաղաքապետը» մոնոնեկայացումը տեղի կունենա փետրվարի 6-ին եւ 7-ին Սունդուկյանի անվան թատրոնում: Նախորդ ներկայացումները տեղի էին ունեցել 2022 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, եւ հիմա ոգեշնչվելով՝ նա որոշել է շարունակել իր ներկայացումները:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ տոմսերի արժեքը սկսում է 4000-ից մինչեւ 20.000 ՀՀ դրամ:

Հիշեցնենք, որ ի սկզբանե Հայկ Մարությանը մտադրվել էր այդ ներկայացումների ժամանակ օգտագործել Նիկոլ Փաշինյանի ու կառավարական կաբինետի այլ անդամների՝ իրեն ուղարկված ձայնային հաղորդագրությունները (voice message), սակայն դրանից հետո նրան լռեցնելու փորձեր են արվել, եւ այդ հաղորդագրություններն այդպես էլ ներկայացման ժամանակ չեն ներկայացվել:

Ի դեպ, հենց այդ մոնոներկայացումից հետո երբեմնի սիրելի «սուպերքաղաքապետին» ՔՊ-ն սկսել է հարվածել, որի կառավարման շրջանում մայրաքաղաքի եւ որեւէ մի ոլորտում դրական շոշափելի տեղաշարժ այդպես էլ չգրանցվեց: Ու բնավ պատահական չէ, որ Պետական վերահսկողական ծառայությունը եւս քաղաքապետարանի մասով «աղմկոտ» բացահայտումներ էր արել:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԶՎԵՐԵՎԻ ՄՈՒՍԱՆ

Ոճաբան եւ շոումեն Սերգեյ Զվերեւը երգչուհի Լյուբով Ուսպենսկայային անվանել է իր մուսան եւ կատակել նրա հետ ընտանիք կազմելու վերաբերյալ:

Շոումենը վստահություն է հայտնել, որ Ուսպենսկայայի հետ հիանալի զույգ կկազմի, եւ նշել, որ երկար ընդմիջումից հետո նորից սկսել է երգեր գրել:

«Ես անմիջապես ոգեշնչվեցի եւ նույնիսկ մի բան գրեցի. չգիտեմ՝ այն քառատող է, թե կրկներգ: Հակառակ որ վաղուց չեմ գրել, ես կարծում եմ, որ սա հենց մուսան է», - ասել է նա:

Զվերեւի ուշադրությանն ի պատասխան՝ Ուսպենսկայան ասել է. «Այն, որ նա երգում է ինձ համար, իհարկե, անսպասելի է եւ հաճելի անակնկալ: Եթե կարողացել եմ ոգեշնչել նրան երգել, ինձ համար շատ ուրախալի է»:

● *Հունվարի 20-ին թատրոն «Կայարան»-ում տեղի կունենա «Գրինչ» մանկապատանեկան ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500-2000 դրամ: Սկիզբը՝ ժամը 18:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է դադարեցվում անձի՝ գործազուրկի կարգավիճակը:

Հասմիկ Մուրադյան (57 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տարածքային կենտրոնի կողմից դադարեցվում է անձի՝ գործազուրկի կարգավիճակը, եթե՝

-գործազուրկը դարձել է զբաղված՝ բացառությամբ ժամանակավոր զբաղվածություն ապահովող ծրագրերում ընդգրկվելու արդյունքում անձի՝ գործազուրկի կարգավիճակը կասեցվելու դեպքի,

-լրացել է գործազուրկի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը,

-գործազուրկը դատական կարգով ճանաչվել է անգործունակ,

-գործազուրկի կողմից փաստաթղթերով ներկայացված տեղեկություններում հայտնաբերվել են ոչ հավաստի տվյալներ, որոնց հիման վրա տրվել է գործազուրկի կարգավիճակ,

-գործազուրկը երկրորդ անգամ հրաժարվել է հարմար աշխատանքի առաջարկից,

-գործազուրկը անհարգելի պատճառով տարածքային կենտրոնի հրավերով երկու անգամ չի ներկայացել հարմար աշխատանքի տեղավորման կամ զբաղվածության պետական ծրագրում ընդգրկվելու առաջարկություն ստանալու համար, ընդ որում՝ տարածքային կենտրոն գործազուրկի չներկայանալու հարգելի պատճառները սահմանում է ՀՀ կառավարությունը,

-գործազուրկը զբաղվածության պետական ծրագրում ընդգրկվելուց հետո հրաժարվել է հարմար աշխատանքի տեղավորման առաջարկից,

-դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով գործազուրկն ազատազրկման է դատապարտվել եւ պատիժը կրում է ազատազրկման վայրում կամ ուղարկվել է հարկադիր բուժման՝ բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալների,

-գործազուրկը մահացել է:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գործազուրկ է համարվում տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած, աշխատանք փնտրող եւ զբաղվածություն համարվող գործունեության որեւէ տեսակով չզբաղված անձը, որն աշխատանք գտնելու նպատակով հաշվառված է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում, պատրաստակամ է անցնելու հարմար աշխատանքի եւ ստացել է գործազուրկի կարգավիճակ:

Տարածքային կենտրոնն աշխատանք փնտրող անձին տալիս է գործազուրկի կարգավիճակ՝ որպես աշխատանք փնտրող հաշվառվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո՝5 աշխատանքային օրվա ընթացքում:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման ժամանակ ավտոմեքենաների փոխարինվող մասերի օտարման գործարքների մասով հարկ վճարողը շարունակո՞ւմ է հանդիսանալ արտոնագրային վճար վճարող:

Կարոն Ջաքարյան (34 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. 07.07.2014թ. ՀՀ ֆինանսների «Ավտոտեխսպասարկման կայանների(կետերի) գործունեությունից արտոնագրային վճարի հաշվարկման վերաբերյալ» N2 պաշտոնական պարզաբանման 1-ին կետի համաձայն՝ ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) միջոցով ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման ժամանակ ավտոմեքենաների փոխարինվող մասերի եւ պարագաների (նյութերի) օտարման գործարքների մասով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելի չեն, եւ այդ մասով հարկերը հաշվարկվում են օրենքով սահմանված կարգով: Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մասով հաշվարկվում եւ վճարվում է արտոնագրային վճար «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի N 8 հավելվածով սահմանված կարգով:

ՀՀ պետական եկամուտների կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է ղեկավարվել «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 11-րդ կետի դրույթներով, որի համաձայն՝ միեւնույն ժամանակահատվածում տարբեր բնակավայրերում կամ տարբեր բնակավայրերի միջեւ նույն թեթեւ մարդատար մեքենայով ուղեւորափոխադրում իրականացնելու համար կիրառվում է տվյալ բնակավայրի համար սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված արտոնագրային վճարի դրույքաչափերից առավելագույնը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սպիտակ-Վանաձոր ճանապարհին նոր արագաչափ է տեղադրվել: Լուսանկարահանող տեխնիկական միջոցը գործարկվելու է 2023 թվականի հունվարի 23-ից: Ճանապարհային ոստիկանությունը հորդորում է վարորդներին պահպանել ճանապարհային երթեւեկության կանոնները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.01.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: